

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱԼ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Երուսաղէմ՝ դուն ալեւոր վիշտերո՛ւ օրրան,
 Հոն խաչուեցաւ Աստուածորդին, եւ այդ գարունին՝
 Նոր կակաչներ հի՛ն ֆաղափի վիրաւոր սրտին,
 Հուսկ ըզգեցան գոյնը կարմիր Յիսուսի արեան:

Վերֆերով բորբ երուսաղէմ, ինչպէ՞ս քեզ սգալ,
 Երբ ամէն օր դեռ կը բանան մարդիկ յարագահ,
 Վերֆեր ու խոց, եւ սառնասիրտ տարօրէն թշուառ
 Այլ սրբանուն՝ վատ հոգիներ զիրար կը խաչեն:

Յափշտակեալ՝ քայց յոյսով վառ, կ'ըսպասես տրտում՝
 Որ ազատեն ու տանի՛ն քեզ քու փառփիղ անցեալ:
 Երուսաղէմ, երուսաղէմ, ինչպէ՞ս քեզ սիրել
 Երբ մութին մէջ, անարձագանք, նըզովեալ ձեռքեր

Ե՛ւ շահադէտ, ե՛ւ Տէրասպան քեզ յար կը թաթխեն
 Մէջ ժանտահոտ ճահիճներու, մինչ՝ ես կը փնտռեմ՝
 Հին երգերուդ վեհ մեղեդին, սարսուռով սրտի,
 Եւ մեծանուն Վարդապետին խօսքերը ոսկի:

ԱՆԵԼ